Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «2025 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 370-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեի ծախսային մասի փոփոխությունը պայմանավորված է հետևյալով՝

Առկա խնդիրների նկարագրությունը

Հաշվի առնելով համայնքային ենթակառուցվածքների սպասարկման և բազմաթիվ այլ աշխատանքների համար վարչական ղեկավարների ինչպես նաև բնակիչների բազմաքանակ դիմումներն անհրաժեշտ է նշված նպատակի համար բյուջեում նախատեսված միջոցներն ավելացնել 15 000,0 հազար դրամով:

Աշնանն ընդառաջ անհրաժեշտություն է առաջացել համայնքում կատարել փոսալցման աշխատանքներ, որի համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել 7 000,0 հազար դրամ:

Բռնցքամարտի միջազգային կարգի մարզիկ Արսեն Հարությունյանը սեպտեմբեր ամսին մասնակցելու է աշխարհի առաջնությանը, որի համար անհրաժեշտ է բժշկական միջամտություններ, դեղորայք, վիտամիններ, դիետոլոգի խորհրդատվական ծառայություն: Անհրաժեշտ է բյուջեում 4 000,0 հազար դրամ նախատեսել մարզիկին աջակցելու համար:

Համայնքապետարան է դիմել Մասիսի երաժշտական դպրոցի վոկալ բաժնի դասատու Լուսինե Կոբալյանը, որը դպրոցի երկու շրջանավարտների հետ միասին հրավերք է ստացել սեպտեմբերի 16-23-ը մասնակցելու Բուլղարիայում անցկացվելիք «Սոֆիա Գրան Պրի» միջազգային մրցույթ փառատոնին: Մեկ անձի հաշվով ծախսը կազմում է մոտավորապես 600,0 հազար դրամ: Առաջարկվում է 1 200,0 հազար դրամով աջակցել :

Համաձայն «Համայնքային ծառայություն մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համայնքային ծառայողները յուրաքանչյուր երեք տարին մեկ պետք է ատեստավորվեն: Ատեստավորումը կազմակերպելու համար անհրաժեշտ է ձեռք բերել համայնքային ծառայության մրցույթի անցկացման ծրագիր և լիցենզիա, որի համար անհրաժեշտ է նախատեսել 275,0 հազար դրամ:

Ուսումնական տարվան ընդառաջ կարիք է առաջացել թարմացնել հետիոտնային անցումները, որի համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 4 000,0 հազար դրամ:

Դարբնիկ բնակավայրում կառուցվում է քառօրյա պատերազմում զոհված Ժ. Եսայանի անվան այգին, որի ընթացքում անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ աշխատանքների, որը կկազմի 900,0 հազար դրամ:

2023 թվականին մեկնարկած ասֆալտապատման սուբվենցիոն աշխատանքների շրջանակում հեղինակային հսկողության ծառայության 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով համայնքը համաֆինանսավորում չի ստացել, սակայն ծառայությունը պատշաճ որակով իրականացված է: Համայնքի միջոցների հաշվին վճարելու համաձայնություն ստանալու դեպքում երկու չափաբաժինների մասով վճարվող գումարը կկազմի 2 831,5 հազար դրամ:

2025-2026թթ կապիտալ աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել հետևյալ նախագծանախահաշվային աշխատանքները.

- Մասիս համայնքի Արևաբույր բնակավայրի Հ. Թադևոսյան փողոցի սկզբնամասում գտնվող տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային աշխատանքներ և պարզ փորձաքննություն՝ 249,6 հազար դրամ
- Մասիս քաղաքի բժշկական կենտրոնից դեպի Երևան-Մեղրի մայրուղի տանող ճանապարհի ասֆալտապատման նախագծանախահաշվային խորհրդատվական ծառայություններ և քաղաքաշինական պարզ փորձաքննություն՝ 1 100,0 հազար դրամ

ՏԵՂԵԿԱՆՔ

հ/հ	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Վարչական մասի Ծախսեր*	*Ֆոնդային մասի Ծախսեր*
				Ծախսեր			
1	**01**	**6**	**1**	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	-27200,0	
2				Սուբսիդիա «Բնակչության հատուկ սպասարկում և ենթակառուցվածքների սպասարկում» ՀՈԱԿ-ին	4511	15 000,0	
3				Վարչական սարքավորումներ	5122		-6 524,6
4				Ոչ նյութական ակտիվներ	5132		275,0
5	**04**	**5**	**1**	**Ճանապարհային տրանսպորտ.** Համայնքային ճանապարհների փոսային նորոգում	4251	7 000,0	
6				Մասիս համայնքում ճանապարհային գծանշման աշխատանքներ	5113		4 000,0
7				Մասիս բժշկական կենտրոնից դեպի Երևան-Մեղրի մայրուղի տանող ճանապարհի ասֆալտապատման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		1 000,0
8				փորձաքննություն	5134		100,0

9	06	2	1	**Համայնքային զարգացում.** Մասնակցային բյուջետավորում	5112		26 940,7
10				Մասնակցային բյուջետավորում	5134		-26 940,7
11	08	1	1	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Սպորտային նպաստ	4727	4 000,0	
12				Դարբնիկ բնակավայրի Ժ. Եսայանի անվան փողոցում այգու բարեկարգման աշխատանքներ /լրացուցիչ մաս/	5113		900,0
13				Նախագծանախահաշվային աշխատանքներ. Արևաբույր բնակավայրում Հ. Թադևոսյանի անվան փողոցի սկզբնամասում գտնվող տարածքի բարեկարգման	5134		219,6
14				փորձաքննություն	5134		30,0
15	08	2	4	**Այլ մշակութային կազմակերպություններ.** Խրախուսում մշակութային գործիչներին	4727	1200,0	
				Ընդամենը		***0,0***	***0,0***

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական և ֆոնդային մասերում ծախսերի ավելացում կամ նվազեցում չի լինի:

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ